

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև արդյունաբերական սեփականության պահպանության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի գործադիր իշխանությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկու պետությունների միջև պատմականորեն ձևավորված բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները,

ցանկանալով զարգացնել տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցությունը,

ընդունելով, որ նման համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայման է արդյունաբերական սեփականության արդյունավետ պահպանությունը,

գիտակցելով այդ նպատակով արդյունաբերական սեփականության տիրապետողների և հեղինակների իրավունքների օգտագործման և պահպանության համար փոխադարձաբար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը հայտնագործության, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման վայրի անվանման և արդյունաբերական սեփականության այլ օբյեկտների նկատմամբ իրավունքների օգտագործման և պահպանության բնագավառում համագործակցությունն իրականացնում և զարգացնում են փոխշահավետության և հավասարության հիման վրա՝ այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից են հանդիսանում կամ կհանդիսանան նրանք:

### Հոդված 2

Կողմերի համագործակցությունն ուղղված կլինի.

արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների կիրառման և պահպանության հետ կապված հարցերի կարգավորմանը,

Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի դիմողներին և Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիմողներին

պահպանական փաստաթղթեր տալու հայտեր տալու և քննարկման ընթացակարգի փոխադարձ պարզեցմանը,

տեղեկատվության, նորմատիվ և այլ փաստաթղթերի, ինչպես նաև արդյունաբերական սեփականության բնագավառում փորձի փոխանակմանը:

### Հոդված 3

Մի Կողմի պետության ֆիզիկական և իրավաբանական անձինք մյուս Կողմի պետության տարածքում արդյունաբերական սեփականության պահպանության բնագավառում կօգտվեն նույն իրավունքներից և առավելություններից, որոնք այդ Կողմի պետության օրենսդրությամբ ներկայումս տրամադրված են կամ կտրամադրվեն իր սեփական ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ելնելով սրանից՝ այդ մյուս Կողմի պետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները պահպանելիս նրանք կօգտվեն իրավական պաշտպանության նույն միջոցներից նույն հիմունքներով և նույն ծավալով, ինչ որ սեփական ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ընդ որում, սույն Համաձայնագրով չկարգավորվող հարցերով Կողմերը կկիրառեն 1967 թվականի հուլիսի 14-ին Ստոկհոլմում վերանայված և 1979 թվականի հոկտեմբերի 2-ին փոփոխված, 1883 թվականի մարտի 20-ի արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան Կոնվենցիայի դրույթները:

### Հոդված 4

Կողմերն անհրաժեշտ միջոցներ կծեռնարկեն ընդունելու համար օրենսդրական ակտեր, որոնք թույլ կտան ապահովել.

այն հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների հեղինակների իրավունքների արդյունավետ պահպանության իրականացումը, որոնց համար տրվել են հայտնագործությունների ԽՍՀՄ հեղինակային վկայագրեր կամ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ վկայագրեր,

Կողմերի օրենսդրություններով նախատեսվող պայմաններով և մնացած ժամանակի համար հայտնագործությունների ԽՍՀՄ հեղինակային վկայագրերը կամ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ վկայագրերը ազգային արտոնագրերով փոխարինելու իրավունքը:

### Հոդված 5

Հայստանի Հանրապետության կամ Վրաստանի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ պահպանում է առանց լիցենզավորման պայմանագրի կնքման հայտնագործությունը կամ արդյունաբերական նմուշը օգտագործելու իրավունքը, եթե այդ հայտնագործության կամ արդյունաբերական նմուշի օգտագործումը օրինականորեն սկսվել է մինչև այլ անձանց կողմից այն հայտնագործությունների կամ արդյունաբերական նմուշների համար ազգային արտոնագիր տալու հայտի ներկայացման ժամկետը, որի կամ որոնց համար նախկինում ներկայացվել է ԽՍՀՄ պահպանական փաստաթղթի հանձնման համար հայտ կամ տրվել է ԽՍՀՄ պահպանական փաստաթուղթ: Ղրա հետ մեկտեղ հեղինակի /հեղինակների/ պարզևատրման վճարումն իրականացվում է այն Կողմի գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում օգտագործվում է այդ հայտնագործությունը կամ արդյունաբերական նմուշը:

#### Հոդված 6

Կողմերը, իրենց իրավասու մարմինների հայտերով, տեխնիկայի մակարդակը որոշելու համար իրականացնում են տեղեկատվական որոնում այդ հայտերով արտոնագրեր տալու հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստմամբ՝ ապահովելով ստացված նյութերի գաղտնիությունը:

Նշված աշխատանքները կիրականացվեն պայմանագրային հիմունքերով՝ Կողմերի համապատասխան ծախսերի ֆինանսավորմամբ:

#### Հոդված 7

Կողմերը պարտավորվում են տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ երկկողմ համաձայնագրերում ներառել արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության ապահովման վերաբերյալ դրույթներ:

#### Հոդված 8

Պահպանական փաստաթղթերի հանձնման հայտի ներկայացման, պահպանական փաստաթղթերի ստացման և դրանց ուժի մեջ պահպանման ժամանակ երկու պետությունների արտոնագրային իրավասուները փոխադարձության սկզբունքի հիման վրա կարող են գործերը վարել անմիջականորեն Կողմերի արտոնագրային գերատեսչությունների հետ՝ ներկայացնելով, ընդ որում, միայն ազգային

դիմողների շահերը: Մի Կողմի պետության ազգային դիմողներին, նույնպես փոխադարձության սկզբունքի հիման վրա, իրավունք է տրվում պահպանական փաստաթղթերի ստացման և ուժի մեջ պահման հետ կապված գործերը վարել անմիջականորեն մյուս Կողմի արտոնագրային գերատեսչության հետ:

#### Հոդված 9

Կողմերը միջոցներ կծեռնարկեն իրենց սահմաններով արտոնագրային փաստաթղթերը, այդ թվում նաև արդյունաբերական սեփականության պահպանման բնագավառին առնչվող պոլիգրաֆիական արտադրանքը, առանց մաքսավճարի բաց թողնելու համար:

#### Հոդված 10

Սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում Կողմերի միմյանց ուղարկվելիք բոլոր փաստաթղթերը ներկայացվում են ռուսերենով:

#### Հոդված 11

Սույն Համաձայնագրի իրագործման պատասխանատուներն են հանդիսանում Կողմերի արտոնագրային գերատեսչությունները.

Հայաստանի Հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունը,  
Վրաստանում՝ Վրաստանի «Սակպատենտի» արտոնագրային գերատեսչությունը:

Արտոնագրային գերատեսչությունների համագործակցության կարգն ու պայմանները սահմանվում են դրանց միջև կնքված հատուկ համաձայնագրով:

#### Հոդված 12

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված բոլոր հարցերը Կողմերը կլուծեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

#### Հոդված 13

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի

անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված կարգով:

#### Հոդված 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին ծանուցման օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է դրա գործողությունը դադարեցնելու մասին Կողմերից մեկի ծանուցումը ստանալուց վեց ամիս անց:

#### Հոդված 15

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է գործել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև արդյունաբերական սեփականության պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» 1993 թվականի դեկտեմբերի 3-ին Երևան քաղաքում ստորագրված Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման համար օգտագործվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի սեպտեմբերի 21-ից: